

---

---

**ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀՈՒՑՆԵՐԻ  
ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

ԲՐՈՒՑՅԱՆ Մ. Ա.

*Առաջին աշխարհամարտում պարտված Թուրքիան 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում հաղթող երկրների հետ հաշտության պայմանագիր կնքեց: Պայմանագրի նախագիծը քննարկվել, մշակվել ու հաստատվել էր 1920 թ. ապրիլի 18-ից 20-ը: Հունաստանի վարչապետ Է. Վենիզելոսը առաջարկել էր օկուպացնել Կ. Պոլիսն իր շրջակայքով և Թուրքիային տնտեսապես ուժասպառ անել:*

*Սևրի պայմանագրի III մասի 4-րդ բաժինը (65-93 հոդվածներ) վերաբերում էր Բզմիրին և նրա շրջակայքին: Բզմիրի վիլայեթը ժամանակավորապես մտնում էր Թուրքիայի կազմի մեջ, սակայն կար մի կետ, ըստ որի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հինգ տարի անց Ազգերի լիգայի խորհրդի որոշմամբ պիտի իրավունք ստանար մըտնելու Հունաստանի կազմի մեջ<sup>1</sup>: Հունաստանի նախարարների խորհուրդը 1922 թ. հուլիսի 18-ին Պոլսում որոշեց Բզմիրին ինքնավար կարգավիճակ տալ և ստեղծել կառավարություն, որն ընդգրկելու էր բոլոր ազգերի ներկայացուցիչներին<sup>2</sup>: Բզմիրի ինքնավարության հարցի քննարկումը տարբեր պատճառներով անընդհատ հետաձգվում էր. որոշ ժամանակ անց այդ գործը հանձնարարվում է հույն պաշտոնյա Ստերետիսին<sup>3</sup>: Սևրի պայմանագրի այս դրույթը հույսեր արթնացրեց Բզմիրի բնակչության շրջանում, քանի որ 1915 թ. նրանք արդեն իսկ ճաշակել էին թուրքական յաթաղանի դաժանությունները: Բզմիրի տեղական իշխանությունները ոգևորությամբ փորձեցին ժամ առաջ իրական դարձնել Սևրի պայմանագրի դրույթները՝ Սևրի պայմանագրի խախտումով: 1922 թ. հուլիսի 14-ին Պոլսի և Բզմիրի հունական կոմիտեները գաղտնի ժողով գումարեցին. այստեղ լրջագույնս քննարկվեց Բզմիրի նահանգը Հունաստանին կցելու հարցը<sup>4</sup>:*

*Արդեն տնական հույն-թուրքական պատերազմը 1920 թ. ավարտվեց հունական կողմի հաղթանակով. դրա հետևանքով բավական տարածքներ նվաճվեցին Բուրսայում: Ոգևորված հաղթանակից՝ Լլոյդ Ջորջը հայտարարել է. «Թուրքերը լիովին ջախջախվեցին»<sup>5</sup>: Այդ հաղթանակները, սակայն, կարճատև եղան: Թուրքիան սաստկացրեց դաժանությունները զավթած տարածքներում այն աստիճան, որ Լլոյդ Ջորջը հաղորդագրություն ուղարկեց Մուստաֆա Բեմալին՝ կոչ անելով դադարեցնել կոտորածը: Վերջինս, սակայն, անտեսելով նրա կոչը՝ սաստկացրեց ճնշումները:*

*Անգլիան և ԱՄՆ-ն խրախուսում էին Է. Վենիզելոսին շարունակել պայքարը, սակայն նաև զգուշանում էին Հունաստանի հնարավոր հզորացումից: Հունական*

---

<sup>1</sup> Սահակյան Ս., Յավայի պայմանագրեր, Ե., 2007, էջ 270:

<sup>2</sup> Վերջին լուր, 18.VII.1922:

<sup>3</sup> Նույն տեղում, 19.VII.1922:

<sup>4</sup> Նույն տեղում, 6.IX.1922:

<sup>5</sup> Karavasilis N. The Whispering Voices of Smyrna, Pittsburgh, 2010, p. 111.

գորքը 1922 թ. Անկարայից ընդամենը մի քանի մղոն էր հեռու, բայց նույն թվականի օգոստոսին վճռական ճակատամարտում պարտություն կրեց<sup>6</sup>: Դեռևս 1922 թ. ամռան կեսերին հույները, գիտակցելով, որ իրենց բանակը չի կարող դիմանալ մինչև ձմեռ, մշակեցին մի պլան, որի համաձայն՝ ողջ ուժով պիտի հարվածեին Կ. Պոլսին: Դա, ըստ Չերչիլի, մի «խորամանկ կաթված» կլիներ, որը հույներին հնարավորություն կտար կազմակերպված նահանջելու:

Օգոստոսի կեսերին Քեմալը հարձակվում է բոլոր ուղղություններով: Նա կենտրոնացնում է իր ուժերը հյուսիսում և հարավում, իսկ վճռական ճակատամարտից առաջ դիմում է իր զինվորներին հետևյալ կոչերով. «Զինվորներ՝, ձեր նպատակն է հարվածել Մի- ջերկրականի ավազանը...»<sup>7</sup>: «Մեծ եւ ազնուական թուրք ազգին. ...Ամենէն մեծ հրամանատարին մինչեւ ամենէն երիտասարդ թուրք զինուորը կը նահատակուին, մեր բանակներուն մէջ տիրող ազգային գաղափարին ցոյց տուած պարտականութեան սիրոյն... Մեր ազգին ապագան ապահով է թէ մեր բանակները ձեռք պիտի բերեն խոստացուած յաղթանակը»<sup>8</sup>:

Ըստ «Դեյլի Թեյեգրաֆ» թերթի՝ սեպտեմբերի 1-ի դրությամբ հույները Զմյուռնիան պաշտպանելու համար հիմնական ճակատից 25 մղոն արևմուտք նոր ճակատ են ստեղծում: Թուրքական կողմը համապատասխան միջոցառումներ է ձեռնարկում՝ հայտարարելով, թե իբր միջոցառումներ է կիրառում երկրի ապստամբությունները ճնշելու համար: Իրականում դրանք ներքին կարգապահական միջոցառումներ չէին, այլապես գորքը չէր պատրաստվի այն աստիճան, որ չվրիպեր ժամանակի մամուլի աչքից («Թայմզ»-ը ներկայացնում է, որ թուրքական գորքերը լավ սպառազինված են ու կարգապահ<sup>9</sup>):

Հունական կողմն իր պարտությունն ընդունում էր որպես ժամանակավոր մի երևույթ, թեև Իզմիրում արդեն խուճապ էր սկսվել: Դրությունը կարգավորելու և հնարավոր խուճապից քաղաքը փրկելու համար Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի՝ Իզմիրում գտնվող հյուպատոսները հավատացնում են քաղաքի հայերին և հույներին, որ իրենց վտանգ չի սպառնում<sup>10</sup>:

Մ. Քեմալը, սակայն, ոգևորված հունական կողմի նահանջից, սեպտեմբերի 2-ին հայտարարում է. «Եթե դա է Աստծո կամքը, որ մենք հաղթենք, մենք պիտի հրկիզենք բոլոր մեր տները, մեր բոլոր ունեցվածքը, պիտի երկիրը ավերակների վերածենք և դատարկ անապատ դարձնենք»<sup>11</sup>: «Մեր գլխավոր խնդիրը կայանում է նրանում, որ

<sup>6</sup> Freely John. *Children of Achilles*, New York, 2010, p. 157.

<sup>7</sup> Housepian M. *The Smyrna Affair*, N. Y., 1971, p. 85.

<sup>8</sup> Վերջին լուր, 9.IX.1922:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Նույն տեղում, 13.IX.1922:

<sup>11</sup> Նույն տեղում:

զենքը ձեռքներին դուրս քշենք թշնամուն, որը դեռևս գտնվում է թուրքական հողում»<sup>12</sup>: Սա տիպիկ թուրքական ձեռագիր էր՝ կոտորել, այրել, ավերել, վերջում էլ՝ մեղավորներ փնտրել:

Թուրքական բանակում տիրող հաղթական տրամադրությունը կարճատև եղավ. սեպտեմբերի 4-ին դեպի Բուրսա շարժվող թուրքական զորքը ջախջախվեց: Հունական կողմը, ոգևորված այս հաղթանակից, ճակատի գլխավոր հրամանատար նշանակեց զորավար Պոլիմենտիոսին<sup>13</sup>: Դա սվեց իր դրական պտուղները, քանի որ Աֆիոն Գարահիսարի շրջանում հունական զորքերը հարձակվեցին, կասեցրեցին երեք կողմերից հարձակման փորձ անող թուրքերին, ստիպեցին նահանջել՝ ձեռք գցելով մեծաքանակ ավար ու գերիներ<sup>14</sup>: Այս ժամանակ «Բոլիթիա» թերթի՝ Իզմիրում գտնվող պաշտոնական թղթակիցը իրավիճակի մասին գրում է. «Տարիէ մը ի վեր պատրաստուած քէմալական յարձակողականը քիչ օրեր առաջ ներքին գործավար Ֆէթհի պէյ յարմար ատենին հոն գտնուելու նպատակով ճամբորդութեան ելաւ դէպի եւրոպական մայրաքաղաքները: Մէկ ամիս առաջ ալ բարձրաստիճան օտար զինուորականները քննեցին քէմալականներու պատրաստութիւնները: Թուրքիա իր բոլոր յոյսը իր այս իսլամական բանակին վրայ դրած էր և այդ պատճառով ոչ մէկ զոհողութեան առջեւ կանգ չառաւ»<sup>15</sup>:

Բրիտանական և ֆրանսիական կառավարությունները փորձում են վերջ տալ օրավուր թեժացող հույն-թուրքական պատերազմին, որի սկզբնաքայլը պիտի լիներ թուրք և հույն սպայական անձնակազմի միջև բանակցություններ սկսելը: Մակայն այդ գործընթացը ունեցավ որոշ դժվարություններ՝ պայմանավորված պատերազմող կողմերի սկզբունքային պահանջների անհաշտելիությամբ: Հունաստանը ցանկանում էր հատուցումներ ստանալ Թրակիայում, իսկ թուրքական կողմը՝ ի դեմս Ֆէթհի բեյի, պահանջում էր Անատոլիայի պարպումն ու Թրակիայի վերադարձը: Ավելի ճիշտ է այն, որ թուրքական կողմը, նկատելով հունական բանակի քայքայված լինելը, հրաժարվում էր զինադադար կնքել<sup>16</sup>:

Սեպտեմբերի 6-ին, երբ հաղորդագրություն ստացվեց թուրքական բանակի՝ Իզմիրի մոտ գտնվելու մասին, այստեղ արդեն ավելի քան 200 000 քրիստոնյա բնակիչներ և նույնքան էլ փախստականներ կային: Թեև տեղի քրիստոնյաները ապաստան էին սվել թուրքերից փախած հազարավոր ընտանիքների, քաղաքը, այնուամենայնիվ, չէր խախտել իր բնականոն առօրյան: Այդ առիթով գեներալ Ջորջ Հորթոնը 1923 թ.

<sup>12</sup> Չարմանալի է, որ խորհրդային պատմագիտությունը բառացի է ընկալում «թուրքական հող» ասածը: Այսպես, Խորհրդային Ռուսաստանի դեսպան Ս. Արալովը բուն հունական տարածքները չգիտես ինչու համարում է թուրքական: Այս հեղինակը հիացական է նշում Քեմալի այն գործողությունները, որոնք ուղղված են «հակազգային տրամադրություններով» տարված հույների նկատմամբ: Аралов С. И. Воспоминания советского дипломата, М., 1960, с., 69, 92.

<sup>13</sup> Վերջին լուր, 6.IX.1922:

<sup>14</sup> Նույն տեղում, 9.IX.1922:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում:

սենատի հանձնաժողովին զեկուցում է. «Կատարյալ կարգ ու կանոն էր տիրում Իզմիրում մինչև թուրքերի հասնելը, 9 սեպտեմբերի, շաբաթ, 1922»<sup>17</sup>: Կարճ ժամանակ անց, սակայն, այդ խաղաղությունը վերածվեց կատարյալ մի խառնաշփոթի. արդեն սեպտեմբերի 9-ի կեսօրից, ըստ Իզմիրում գտնվող ծովակալ Մարկ Բրիսթոլիի հաղորդման, իրավիճակը սկսում է սրվել, հունական զորքերը պատրաստվում են փախուստի, քաղաքը լցվում է փախստականներով, հրդեհ առաջանալու վտանգ է սպառնում<sup>18</sup>: Արդեն սեպտեմբերի 11-ի առավոտյան հայկական թաղամասը շրջապատված էր թուրք զինվորներով, իսկ փողոցներով անցնող թուրքական մունետիկը թուրք բնակչությանը հորդորում էր լքել տարածքը՝ հայտնելով, որ դատաստանի առջև կկանգնի յուրաքանչյուր ոք, ով կթաքցնի որևէ հայի<sup>19</sup>: Այս ամենից հետո էլ թուրքական կողմը հայտարարում է, թե իբր հույներին և հայերին անարգել փախչելու հնարավորություն է տրվելու, իսկ ոչ մահմեդականներին քաղաքից դուրս չթողնելու կեղծ լուրերը տարածել են հույները<sup>20</sup>:

Թուրքական զորքերի մուտքը Իզմիր խուճապ առաջացրեց բնակչության շրջանում: Ըստ մի լրագրողի՝ «...Հեղինակները իրենց պարպումի գործողությունները տենդագին կը շարունակեն: Գիշերը արդեն բոլոր հիւանդանոցները պարպած, հիւանդներն ու կազմածները շոգենաւ փոխադրել տուած են... Յունաստան գացողներուն համար անցագրի գործողութիւնը արդեն վաղուց վերցած է... Քրիստոնեայ խանութները արդեն գոց են: Տեղացի ժողովուրդը կը վախենայ տունէն դուրս ելլելու»<sup>21</sup>:

Մուստաֆա Քեմալը քաղաք մտավ հաջորդ օրը և անմիջապէս հրամայեց իջեցնել հունական դրոշը<sup>22</sup>: Թուրքերը անասելի կոտորած և ավեր են իրականացնում, մի բան, որ նույնիսկ ներկայացնում է իր թուրքամետոյայամբ աչքի ընկնող Աթաթուրքի կենսագիր, նրա գործողություններով հիացած Լ. Կինրոսը. «Իրավիճակը լարված էր Զմյուռնիայում: Այնտեղ հազարավոր գաղթականներ կային, մարդկային անհամար զոհեր. քաղաքի հրդեհման վտանգ կար: Հրաման է արձակվում արական սեռի բոլոր աշխատունակ քրիստոնյաներին տեղահան անել: Ամերիկյան պաշտոնական տվյալների համաձայն՝ ընդհանուր մահացությունը հասել է ժամը 2000-ի»<sup>23</sup>:

Իզմիրի դեպքերի ամենասարսափելի դրվագը քաղաքի հրդեհն է: Ընդհանրապէս հրդեհի առաջացման, դրան զոհ գնացածների մասին տվյալները բավական հակասական են: Հայկական թաղամասերում նկատել են, որ մի քանի օր է թուրքերը

<sup>17</sup> Housepyan M., նշվ. աշխ., էջ 95:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 102:

<sup>19</sup> Վերջին ժամ, 14.IX.1922:

<sup>20</sup> Kinross L. Ataturk, N. Y., 1978, p. 364.

<sup>21</sup> Վերջին ժամ, 14.IX.1922:

<sup>22</sup> Kinross L., նշվ. աշխ., էջ 368:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 371, այլ տվյալների համաձայն՝ 50 000 քրիստոնյա է զոհվել թուրքական զորքերի մուտքից հետո, Jonsson David, The Clash of Ideologies, USA, 2005, p. 249. Կա այլ կարծիք, որ թուրքերի հարձակման ժամանակ զոհվել է 30 000 քրիստոնյա, իսկ 200.000-ը բռնել է փախուստի ճանապարհը, American Influence in Greece 1917-1929, Cassimatis L. Kent, Ohio, 1988, p. 79. Kinross L., նշվ. աշխ., էջ 172:

քաղաքը հրդեհելու պատրաստություններ են տեսնում: «Այսօր՝ երկուշաբթի սեպտեմբերի 11-ին, ես տեսել եմ իմ աչքերով՝ թուրքերը տանում են ռումբ, վառոդ, նավթ և այն ամենը, որ անհրաժեշտ էր հրդեհ սկսելու համար», - իր օրագրում հիշատակել է ականատես Պատվելի Հարությունյանը: Արդեն չորեքշաբթի օրը երեք խոշոր հրդեհի բոցեր էին երևում հունական քոլեջի հարևանությամբ<sup>24</sup>:

Լ. Կինրոսը կարծում է, որ մի քանի գիշեր արյունահեղություն է տեղի ունեցել հայերի և թուրքերի միջև, որոնք հայկական թաղամասերում «կասկածելի» մարդիկ են փնտրել: Այստեղ հայերը հավանաբար ինքնապաշտպանության համար ռումբ են գցել թուրքական զինվորների վրա, ինչն էլ, ըստ թուրքական կողմի, հրդեհի առաջացման պատճառ է դարձել: Քեմալը օտար դեսպանների հետ ունեցած հանդիպումներում նշում է, որ դա հայերի հրձիգ կազմակերպության կողմից միտումնավոր մի արարք էր, քանի որ մինչև թուրքերի ժամանումը եկեղեցիներում ելույթներ են ունեցել, կոչեր են հնչել այրել քաղաքը՝ որպես սրբազան պարտք<sup>25</sup>:

Բտալական շոգենավերից մեկը Իզմիրի կոտորածներից փրկված մի կին է տեղափոխում, որը հանգամանորեն պատմում է Իզմիրի աղետը: Ըստ նրա՝ հրդեհն առաջացել է հայազգի Գևորգ Սահակյանի տնից: 7000 հոգի ապաստան են գտնում Ս. Գևորգ եկեղեցում: Դեպքերից երեսուն ժամ անց ֆրանսիացի սպաների գլխավորությամբ մի ջոկատ է մտնում եկեղեցի, հարցնում ապաստանելու պատճառը: Ապաստանվածները ցույց են տալիս դրսից նետված ռումբերի տեղերը և խոստանում անձատուր լինել, եթե կյանքի պահովության երաշխիքներ ունենան<sup>26</sup>: Ականատեսը վկայում է, որ թուրքերը հայկական շատ խանութներ կողոպտել են, թալանել Իզմիրի բնակչության կողմից փախստականների համար հանգանակված գումարները: Հայ զոհերի թիվը մեծ է եղել, սակայն հստակ չէ, քանի որ Իզմիր են տեղափոխել նաև այլ շրջանների քրիստոնյաների:

Այն, որ հրդեհը ծագել է հայի տնից, թույլ է տալիս շատերին ենթադրելու, թե իբր հայերն են հրդեհել քաղաքը<sup>27</sup>: Օրինակ, Իզմիրի պատմությունն ուսումնասիրող Մ. Հովսեփյանը մեջբերում է ֆրանսիացի լեյտենանտ Մերրիլլի այն վկայությունը, որ հայ մոլեռանդները երդվել էին սպանել քաղաք մտնող առաջին թուրքին: Այդ նպատակով նրանք թշնամու վրա ռումբեր են նետել, որից էլ հավանաբար առաջացել է քաղաքի հրդեհը<sup>28</sup>:

Վերը նշված հայ կնոջ վկայությունը այլ մեկնակերպով է ներկայացնում «Աքջամ» թերթը: Ըստ այդմ՝ հրդեհը նախապես ծրագրված է եղել. «Հրդեհը կազով ու ձեռնառումբով պատրաստուած էր: Հրդեհը մարելու համար հայոց թաղէն անցնող

<sup>24</sup> Housepyan M., նշվ. աշխ., էջ 141-142:

<sup>25</sup> Kinross L., նշվ. աշխ., էջ 370, 371:

<sup>26</sup> Վերջին լուր, 20.IX:

<sup>27</sup> Jonsson David, նշվ. աշխ., p. 248:

<sup>28</sup> Housepyan M., նշվ. աշխ., էջ 103:

զինուորներու վրայ կապար տեղացուցեր, որուք և քար նետած են, սակայն նետողներէն ոչ մէկուն բան մը չեն ըրած»<sup>29</sup>:

Հունական «Նեոլոդոս» թերթը նշում է, որ Իզմիրի հրդեհը առաջացել է հայկական թաղամասերից այն ժամանակ, երբ հայերը Թորգոմի գլխավորությամբ ինքնապաշտպանություն են կազմակերպել: Ժամանակի հայ մամուլը վստահորեն նշում է, որ Թորգոմը եկեղեցում չի եղել, այլ քաղաքի գրավումից առաջ հույն սպաների հետ քաղաքից դուրս է եկել<sup>30</sup>:

Այս իրադարձությունների մասին հետաքրքիր ենթադրություններ է անում ֆրանսիական մամուլը: Այստեղ թեև անիրական են համարում Քեմալի կողմից քաղաքն այրելու վարկածը, սակայն անհնար են համարում նաև այն, որ հայերը կամ հույները կայրեին. «Բայց անստույգ է ամբաստանել հայերը եւ յոյները, որոնք առաջին զոհերը եղան, մինչ թրքական թաղը անվնաս մնացած է: Քանի մը տասնեակ հազար Հայեր հաստատուած էին Իզմիրի մէջ, ուր բարգաւաճ վիճակ մը ունին: Ինչու անոնք իրենց տուները քանդէին: Յոյներն ալ Իզմիրի մէջ միլիոններու հասնող շահեր ունէին: Ինչու կրակ տային քաղաքի մը, որ իրենց յոյսերը կը խորհրդանշէր»<sup>31</sup>: Թերթը ավելի տրամաբանական է համարում այն, որ քաղաքը կարող էին այրել թուրք զինվորները, որոնք, չանսալով հրամանատարության պահանջներին, փորձել են այրել այն ու կարծիք ստեղծել, թե դա խուճապահար հույների ձեռքի գործն է:

Իզմիրում գտնվող ամերիկացիների վկայությամբ թուրքերը, որ առավել մեծ հակակրանք ունեին հայերի նկատմամբ, քան հույների, որոշել են վրեժ լուծել նրանցից՝ այրելով նրանց թաղամասերը<sup>32</sup>:

Հրդեհը ամբողջովին կլանել էր ֆրանկների և քրիստոնյաների թաղամասերը. ավելի քան 200 000 մարդ լցվել էր փողոցները, կային հազարավոր զոհեր<sup>33</sup>: Սեպտեմբերի 19-ի տվյալներով քաղաքի 4/5-ը այրված է եղել: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ հրդեհից զերծ է մնացել թուրքական թաղամասը<sup>34</sup>: Կարծում ենք, որ եթե հայերը կամ հույները իսկապես այրած լինեին քաղաքը, ապա այն պիտի սկսեին հենց թուրքական թաղամասից: Հրդեհը թեև Իզմիրի աղետի բարձրակետն էր, սակայն դեռ վերջը չէր: Քաղաքի գրավումը ուղեկցվել է թալանով, բռնություններով և կողոպուտներով: Անգամ Լ. Կինրոսը, թեկուզ մասամբ, չի կարողանում չնկարագրել վայրագությունները: «Սոված և ուժասպառ նրանք կորցրել էին նույնիսկ քայլելու կարողությունը», - նշել է ականատեսներից մեկը: Նրանք նստած էին միասին, հաճախ

<sup>29</sup> Վերջին լուր, 20.IX.1922:

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> Նույն տեղում, 22.IX:

<sup>32</sup> Այս մասին վկայություն կա Ռենե Պյուտյի՝ ոճրագործության ականատեսների ցուցմունքների հիման վրա գրված աշխատությունում: Այն հայերեն թարգմանությամբ մեջբերել է Մ. Ներսիսյանը (**Ներսիսյան Մ.**, Պատմության կեղծարարները, Ե., 1998, էջ 119): Այստեղ վկայություններ կան նաև տարբեր թերթերի թղթակիցների կողմից, ըստ այդմ՝ Իզմիրի հրդեհը կազմակերպել էին թուրքերը:

<sup>33</sup> Վերջին լուր, 22.IX.1922:

<sup>34</sup> Նույն տեղում, 23.IX:

ճանապարհներին, և եթե հրաման էր արձակվում տեղափոխվելու, կատարում էին կենդանու նման հնազանդ, իսկ նրանց աչքերը արտահայտում էին հուսահատություն և հոգնածություն»<sup>35</sup>: Նրանք հայերից 100-հոգանոց խմբեր են կազմել և բոլորին առանձին-առանձին սպանել: Բացի համընդհանուր կոտորածներից, թուրքերը հրդեհում էին իրենց հետևում մնացած թաղամասերը, որպեսզի կորցնեին իրենց վայրագությունների հետքերը<sup>36</sup>: Թուրքերը ոտնատակ են տվել ողջ քաղաքը, առաջին հերթին ոչնչացրել քաղաքի բարգավաճմանը նպաստող յուրաքանչյուրին: Երկու թուրք զինվորներ տանջամահ են արել հայազգի մի ժամագործի՝ Ջավեն անվամբ: Նրանցից մեկը կրակել է Ջավենի կզակին, թողել դիակը փողոցում ընկած: Համատարած վայրագություններին զուգորդվում էին թուրքերի լպիրշ հայտարարությունները. «Որտեղ է ձեր աստվածը, թող գա ու փրկի ձեզ»<sup>37</sup>: «Թուրքական վայրագությունների ապացույցները՝ բազմահազար մարդկանց ոսկորները թափված են եղել ճամփեզրերին: Մենք դա նկատեցինք հաջորդ տարվա գարնանը, երբ ձյունը հալվեց»,- նշել է մի ականատես<sup>38</sup>:

Վերոնշյալ իրադարձությունների ժամանակ Մ. Քեմալը մնացել է Իզմիրում: Եվ արդեն Իզմիրի մի բուռ քրիստոնյաներից Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտության վրեժն առնելուց հետո նա, հիացած իր արարքներից, ցինիկորեն ասել է թուրք լրագրողներին. «Դուք չգիտեք, թե ինչեր ենք մենք տեսել: Մենք դարձել ենք պատմություն»<sup>39</sup>: Ժամանակի հայ մամուլը անդրադարձել է Իզմիրի աղետալի իրադարձություններին, հնարավորինս ներկայացրել գաղթականների քանակն ու վիճակը: Իզմիրից Պոլիս եկած ֆրանսիական մի նավ այստեղ էր տեղափոխել 1000-ից ավելի հայ գաղթականների, որոնք ապաստանել էին Իզմիրի վիեննական միաբանության վանքի մեջ և 1-2 օրից ազատվել ֆրանսիական սպաների միջոցով. «Ճամփորդները շատ խղճալի վիճակի մեջ կը գտնուին և խիստ աղեխարշ պատմություններ կ'ընեն Իզմիրի մեջ տեղի ունեցած իրադարձութեանց մասին»,- նշում է «Վերջին լուրը»<sup>40</sup>: Ֆրանսիացիների միջամտությունը թշնամաբար է ընդունում թուրքական կառավարությունը: «Թան» թերթը գրում է, որ քաղաքում անկարգությունները առաջացել են ֆրանսիացիների պատճառով, որոնք ապաստան են տվել 15.000 փախստականների. նրանք, բացի սնունդ և ապաստան տալուց, 2000 հույների տեղափոխել են Իզմիրից: «Կարգապահությունը կը տիրէ Իզմիրի մեջ, թրքական իշխանութեանց կողմէ ապահովուած»<sup>41</sup>, - գրում է թերթը, հավանաբար «կար-

<sup>35</sup> Kinross L., նշվ. աշխ., էջ 371:

<sup>36</sup> Ներսիսյան Մ., նշվ. աշխ., էջ 120-121:

<sup>37</sup> Housepyan M., նշվ. աշխ., էջ 28:

<sup>38</sup> Karavasilis N., նշվ. աշխ., էջ 128-129:

<sup>39</sup> Kinross L., նշվ. աշխ., էջ 373:

<sup>40</sup> Վերջին լուր, 22.IX.1922:

<sup>41</sup> Նույն տեղում, 24.IX.1922:

գապահություն» բառի տակ քողարկելով քրիստոնյաների նկատմամբ կատարված անասելի վայրագությունները:

Իզմիրում թուրքերի վայրագությունների վատ ապացույցը հույն արքեպիսկոպոս Քրիստոստոմոսի ողբերգական սպանությունն է: Ամերիկյան կառավարության ներկայացուցիչ Ջորջ Հորտոնը իր հուշերում նրան ներկայացնում է որպես մի պատկառելի գործիչ, ժողովրդի սիրելի, որ իր անեծքն էր հղել թուրքերին<sup>42</sup>: Դեռևս թուրքական շրջափակման օրերին արքեպիսկոպոսը դիմել էր Իզմիրի հյուպատոսություններին՝ ինչ-որ կերպ սատարելու իր ժողովրդի պաշտպանությանը: Կա կարծիք, որ արքեպիսկոպոսը սպանվել է սեպտեմբերի 15-ին, իսկ Եփեսոսի արքեպիսկոպոսը կարողացել է մի օտար նավով փախչել<sup>43</sup>: Վերջինս հետագայում պատմել է՝ Իզմիրի արքեպիսկոպոսին և նրա թարգմանչին քեմալականներն են սպանել՝ նախապես անարգանքի ենթարկելով: Թուրքական ամբոխը անասելի չարչարանքների ենթարկելուց հետո պատահողով է նրանց մարմինները, արքեպիսկոպոսին կախաղան բարձրացրել Իքի Չեշմեի հրապարակի վրա<sup>44</sup>: Այս տվյալը նման է հույն պատմաբան Կարավասիլիսի հաղորդած այն տեղեկությանը, ըստ որի, թուրքական զորքերի հրամանատար Նուր ադ Դինը պատրիարքին հանձնում է ամբոխին, թուրք, որը խոշտանգում է նրան, պոկում մորուքը, հանում աչքերը: Պատրիարքի վերջին խոսքերն են լինում. «Հա յր, ների ը նրանց, նրանք չգիտեն՝ ինչ են անում»<sup>45</sup>: Հայկական մամուլը ներկայացնում է նաև թուրքական թերթերի՝ այս գազանությունն իրենցից հեռացնելու համար թափած զուր ջանքերը: Ըստ թուրքական մամուլի՝ արքեպիսկոպոսին սպանել են հույները, որոնք վերջինիս իբր համարել են կատարվածի մեղավոր: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ արքեպիսկոպոսը սպանվել է Իզմիրի գրավումից առաջ եղած համընդհանուր խառնաշփոթության ժամանակ, մինչդեռ Ջ. Հորթոնը և այլք մետրոպոլիտին տեսել են թուրքական հարձակումներից հետո<sup>46</sup>:

Իզմիրի հրդեհը և 300000 քրիստոնյա բնակչության ջարդը ժամանակի մեծ աղետներից մեկն է: Դրանով վերջ տրվեց Փոքր Ասիայի հունական քաղաքակրթությանը<sup>47</sup>: Իզմիր չէ, որ Լլոյդ Ջորջը բազմիցս քննադատել է թուրքերի այս

<sup>42</sup> Housepyan M., նշվ. աշխ., էջ 111: Վերջինը նրան Հորթոնն էր տեսել, սևազգեստ և չափազանց գունատ: Ի դեպ, Հորթոնը իր հուշերում գրում է. «Իմ դիրքորոշումն այստեղ, որպես ամերիկյան ներկայացուցիչ, չափազանց դժվար է»:

<sup>43</sup> Jonsson David, նշվ. աշխ., էջ 248:

<sup>44</sup> Վերջին լուր, 23.IX.1922:

<sup>45</sup> Karavasilis N., նշվ. աշխ., էջ 134:

<sup>46</sup> Թուրքական «Աքշամ» թերթն էլ գրում է, թե իբր մետրոպոլիտը Իզմիր մըտնող Քեմալին և թուրքական զորքին հանդիսավոր դիմավորելու է գնացել, նրան ժամանակավորապես փակել են և երբ տեղափոխել են բանտ, սպանել են տեղացի հույները (Վերջին լուր, 20.IX.1922):

<sup>47</sup> Karavasilis N., նշվ. աշխ., էջ 130: Այս դեպքերից հետո Փոքր Ասիայից արտաքսվել է 1,5 մլն հույն, որոնց ապաստան է տվել հունական 5 մլն բնակչությունը, Cassimatis L., American Influence in Greece 1917-1929, Kent, Ohio, 1988, Luxemburg, p. 111. Ըստ 1923 թ. տվյալների՝ երեխաների թիվը հունական մանկատներում հասել է մոտ 25000-ի, նույն տեղում, էջ 118:



վայրագությունները: Եվրոպական պատմագիտությունը այս երևույթն անվանել է «հոլոքոսթ»<sup>48</sup>: Իզմիրի դեպքերից հետո մոտ 2100 գաղթականներ տեղափոխվեցին Ֆրանսիա, 2000-ը՝ Մարսել<sup>49</sup>, Մայրթա՝ 400 հոգի, 1000 հոգի՝ Պոլիս, որոնցից 110-ը հայեր են եղել, 413-ը՝ ֆրանսիացիներ<sup>50</sup>: 1922 թ. իրենց բնակավայրերը լքեցին 30000 Պոնտոսից եկած հույներ<sup>51</sup>:

Իզմիրում թուրքերի կատարած գազանությունները լիովին գլխիվայր են ներկայացնում խորհրդային պատմագրության մի շարք ներկայացուցիչներ: Նրանցից ոմանք մոլորության մեջ են գցում՝ գերազնահատելով քեմալական տիրապետության շրջանը: Օրինակ, Յու. Պետրոսյանը և Ա. Յուսուպովը, նկարագրելով Իզմիրը, թուրքական տիրապետության ժամանակաշրջանը համարում են տնտեսական վերելքի, մշակութային ծաղկման շրջան՝ անտեսելով այն, որ պատմական Չմյուռնիան միշտ էլ եղել է տնտեսության ծաղկման կենտրոն<sup>52</sup>: Այս հեղինակները լիովին այլ կերպ են ներկայացնում իրականությունը: Մուղրոսի զինադադարից հետո Իզմիրի թուրքական գործերի հրամանատար Ալի փաշան իբր թե հրամայում է իր գործին հետ քաշվել. այդ լուրը բացասական արձագանք է ստանում բնակչության շրջանում: Քաղաքում հանդես են գալիս քրիստոնյա ցուցարարներ, որոնք իբր դեմ էին քաղաքը եվրոպական գործերի տիրապետությանը հանձնելուն<sup>53</sup>: Այն, որ հեղինակները թուրքամետոռեն են վերաբերվում իրադարձություններին, նկատելի է յուրաքանչյուր տողից: Նրանք զարմանալիորեն չեն նշում այն ավերն ու կողոպուտը, որը չեն կարողանում թաքցնել անգամ թուրք պատմաբաններն ու Լ. Կինրոսը: Այսպես, անտեսելով թուրքերի վայրագությունները՝ նրան քնշում են, որ թուրքերի մղած «ազատագրական պայքարի և հաղթանակի» շնորհիվ Իզմիրի կյանքում նոր փուլ սկսվեց՝ մոռանալով նշել, որ խոսքն արդեն թուրքական, այլ ոչ թե հունական Իզմիրի մասին է<sup>54</sup>:

Յու. Պետրոսյանի և Ա. Յուսուպովի աշխատանքն ակնհայտորեն կրում է վաղ շրջանի խորհրդային որոշ հեղինակների թրքասիրական ազդեցությունը: Այս հեղինակները միակը չեն, որ հիացած են Քեմալով ու նրա «սխրանքներով»: Դրանցից մեկն էլ Միմեն Արալովն է, որը 1922-1923 թթ. եղել է Թուրքիայում Խորհրդային Միության դեսպանը: Իր հուշերում հեղինակը անթաքույց հիացմունք է արտահայտում Քեմալի նկատմամբ, իսկ Աթաթուրքին հղված նրա գովեստները հաճախ հասնում են չափազանցության: Նա միակողմանիորեն է ներկայացնում հույն-թուրքական պատերազմը, ոգևորությամբ խոսում թուրքերի հաղթանակների մասին: Մակայն Քեմալով հմայված՝ նա նս ցատկում է այն իրադարձությունների վրայով, որոնք պիտի խոսեին թուրքերի սփռած կոտորածների ու թալանի մասին: Իզմիրի ողբերգական

<sup>48</sup> Jonsson David, նշվ. աշխ., էջ 249:

<sup>49</sup> Վերջին ժամ, 26.IX.1922:

<sup>50</sup> Վերջին լուր, 22.IX.1922:

<sup>51</sup> Adam Jones. Genocide, N. Y., 2011, p. 165.

<sup>52</sup> Петросян Ю., Юсупов А. Измир, М., 1973, с. 21-33.

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 42:

<sup>54</sup> Петросян Ю., նշվ. աշխ., էջ 46:

ղեկավարի մասին այստեղ գրեթե ոչինչ չկա, իսկ մանր-մունր տեղեկատվության միջոցով փորձ է արվում թաքցնել պատմական իրողությունը. բացի այն, որ թուրք «փրկարարները» հաղթում են հույն «օկուպանտներին», նրանք նաև «փրկում են» Իզմիրը այն զավթած թշնամուց (հույներից – Բ. Մ.): Իսկ կատարած անասելի կոտորածների մասին հեղինակը լռում է՝ ասելով, թե իբր հույները ցնծությամբ ընդունեցին թուրք «ազատարարներին»<sup>55</sup>: Հայ պատմագիտությունը միանշանակ չի ընդունել խորհրդային որոշ պատմաբանների միակողմանի, երբեմն նաև ստահող մտքերը: Դրա մասին է վկայում Մ. Ներսիսյանի հոդվածը, որտեղ հեղինակը սուր քննադատության է ենթարկում լրագրող Գ. Արինիչին՝ թուրքամետ նեղ տրամադրությունների համար<sup>56</sup>:

Իզմիրի Մեծ հրդեհով ավարտվեց հույն-թուրքական 1919-1922 թթ. պատերազմը: Ընդհանուր առմամբ, 1914-1923 թթ. երիտթուրքերի ագրեսիվ քաղաքականությանը զոհ են դարձել հարյուրհազարավոր հույներն հայեր: Ցեղասպանությունների ուսումնասիրման միջազգային ասոցիացիան (IAGS) 2007 թ. ղեկավարներին այդ իրադարձությունները պաշտոնապես համարել է ցեղասպանություն: Այսօր հունական հանրության մեծ մասը 1922 թ. սեպտեմբերի դեպքերի համար ներողության է սպասում: Այժմ էլ հերթում են Հայոց ցեղասպանության, Իզմիրի հրդեհի և միևնույն ձեռագրով արված ոճրագործությունների ճանաչման փաստերը:

#### ИСТОРИЯ ТРАГЕДИИ ГРЕКОВ СМИРНЫ В АРМЯНСКОЙ ПРЕССЕ

БРУТЯН М. А.

#### Резюме

В сентябре 1922 г. турецкие войска под предводительством Мустафы Кемаль учинили в Смирне неслыханную резню и погромы, о чем явствуют данные Л. Кинроса – личного биографа Ататюрка. Армянская периодика откликнулась на эти события, дав объективную оценку событий. Захват города сопровождался грабежом и насилием. После этих трагических событий Кемаль выступил с заявлением о том, что в связи с организованной в Смирне бойней турки стали историей. Кульминацией жестокости турок стало зверское убийство греческого архиепископа Хрисостомоса. В армянской прессе появились сообщения о том, что турецкая периодика пытается опровергнуть причастие турок к этому зверству. Убийство 1,5 миллиона греков и поджог Смирны положили конец греческой цивилизации в Малой Азии.

<sup>55</sup> Аралов С. И., նշվ. աշխ., էջ 131:

<sup>56</sup> Բավական արժեքավոր է այս հոդվածը, քանի որ հեղինակը բացահայտ քննադատության է արժանացնում խորհրդային պատմագիտությունն ու մամուլը (Ներսիսյան Մ., նշվ. աշխ.):